



ՀՐԱՊԻՐ ԱՂԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ՔԱՆՈՒՄԱՆ ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամեն անգի համար ուր այս րոպեի մուտքը արգելուած չէ, ամբողջ 14րդ շրջանի (98 օգոստ.—99 մայիս) բաժնորդագրին է 20 Փր. կանխիկ...

Նամակ և ծրար պէտք է գրկել հետևեալ հասցեով. M. PORTOUKALIAN, Rédacteur du journal Arménia, MARSEILLE (France).

ԵՂ ՏԱՐԻ ԹԻՒ 26

1898 ՀՈՅՆՄԱՐԵՐ 2
1898 ՀՈՅՆՄԱՐԵՐ 21 (Հ. Տ.)

ՉՈՐԵՑԱԾՈՒՄ

Կը հրատարակուի յո՛ւր և յո՛ւր օրեր

ՉՈՐԵՑԱԾՈՒՄ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, հաստատուելու է կառավարութեան կը հրատարակուի զրոյսով իւրերէն: Չորս ամառը չէ վերադարձուել չհրատարակուած ձեռագիրները: Պատուագրութեան կը նշուին հայերէն և ֆրանսերէն լեզուով: Պատուագրութեան միջոցով յարկաւոր 1 սանդիակարձէ 1 քաղաքի 2 սանդիակարձէ: Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction: Rue Glandevès, 17.

ԲԱՅՈՒՄԵ Ե ԲԱՃՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
"ԱՐՄԵՆԻԱ" Ի
ԵՂ ՇՐՋԱՆԻՆ
(1898 ՕԳՈՍՏՈՍ—99 ՄԱՅԻՍ)

Արևելահայ բաժնորդագրութեան պայմանները նորից կը մնան: Թէ՛ օգոստոսէն, թէ՛ սեպտեմբերէն և թէ՛ հոկտեմբերէն սկսելով բաժնորդագրութեանը հատարուած կը պարտին վճարել 20 Փրանք բաժնորդագրին մինչև 14րդ շրջանի վերջը (1899 մայիսի վերջը): Իսկ անոնք որ ամբողջ 14րդ շրջանին (1898 օգոստ.—99 մայիս) համար չեն բաժնորդագրուիր, կարող են ամսական 2 1/2 Փր. հատուով բաժնորդագրուիլ քանի ամսի համար որ ուզեն, 1899ի մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով:

ԱՐՄԵՆԻԱԻ ՕԺԱՆԴԱՄԻՆԵՐՆ ԻՐ րենց համար ստացած մէկ օրինակ Արևելահայերէն զատ՝ որի բաժնորդագրինը 20 Փր. է, որի շնորհիւ համար քանի օրինակ Արևելահայերէն որ ուզեն, իրենց լրագրի ծրարին մէջ գրուած կը զըրկուի առանց ուրիշ հասցէ վրան գըրուելու և անոնց բաժնորդագրինը ամսական մէկ ֆրանք միայն հաշուելով: Ծանկացողներին կը զրկուի Արևելահայ Օժանդակութեան կառնուակիցը:

Այսուհետև, 98 հոկտեմբերէն կամ անոր յաջորդ ամիսներէն սկսած (մինչև 14րդ շրջանի վերջը) բաժնորդագրութիւն կրնանք ընդունիլ որովհետև օգոստոսի և սեպտեմբերի թիւերն սպառուած են արդէն:

«ԱՐՄԵՆԻԱ»Ի ՅՈՒՆՅԱՐԱՐ Ա ՏԱՐԵԿԱՆ (1885—86)

Արևելահայ Ս. տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառուած և միննոյն ժամանակ շատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. փորթուղալեանի դրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Յոշարարի մէջ որ ութամալ գիրքով 124 երեսներէ կը բաղկանայ: Գինն է 1 Փրանք և 40 սանթիմ. (Պարսկաստանի համար 1 Փրանք):

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց վեհ. կարողիկոսին՝ Ամերիկայի Հայերին դրկած կոնդակը. — Արևելահայ վիճակի կայսրը եւ Կ. պոլսի հայ եւ յոյն պատրիարքները. — Բաժնի գերեզմանին առաջ. — Վիճակի կայսրի Արեւելք ճանբարդութիւնը. — Կրկու. — Ֆարոսա. — Ներքին լուրեր. — Արտասանմանի լուրեր. — Մանուգումներ:

ԱՄԵՐԻԿԱԻ ՀԱՅՈՅ ՎԵՂ. ԿԱՌՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՐԻԿԱԻ ՀԱՅԵՐԻՆ ՂՐԿԱԾ ԿՈՆԴԱԿԸ

ՄԿՐՏԻՉ Ծառայութիւններ և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համագրական Նախարար Աթոռոյ Արարտեան Առաքելական Մայր Եկեղեցոյ Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, զբնիստաւանդ ողջոյն հանդերձ հայրապետական օրհնութեամբ նորիւ ծագող հարազատ և Հայկազն որդւոցք մերոց սիրելեաց, ստաբիլը զուակացդ Մօրք Լուսոյ Սրբոյ կաթողիկէ Էջմիածնի՝ Չեղ ամենեցուն, որ բնակեալ կայք ի նոր աշխարհն յԱմերիկա և ի քաղաքս նորին յՈւաշինգթոն և ի շրջակայս, ի Նիւ Եորք և ի շրջակայս, ի Պոսթօն և ի շրջակայս, ի Լորէնս և ի շրջակայս, ի Փրօվիտենա և ի շրջակայս, ի Ֆրէզկո (Քալիֆօրնիա) և ի շրջակայս, ի Չիքագօ և ի շրջակայս, ի Ֆրանկօ և յայլ քաղաքս և յաւանս նորին, բարեշնորհ վարդապետացք և քահանայեցք, յարգելի հոգարարութեացք, բարեջան վաճառականացք, ժրջան արհեստարարացք, քրանական երկրագործացք և մշակացք, պարկեշտասուն տիկնանցք և օրիորդացք, ծերոցք և երիտասարդացք և ամենայն չափու հասակի ի Քրիստոս հաւատացեալ որդւոցք, յԱմերիկայէն Սրբոյ Առաքելոցն Թաղէտի և Բարթոլոմէոսի Նախկին Լուսաւորչացն Հայաստան աշխարհիս և Սրբոյ Հօրն մերոյ Քրիստոսի երկրորդի Լուսաւորչին, որոյ երկնուայց վարդապետութեամբ հաւատացեալք էք ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, խնդալ:

Շնորհք, Սէր, Խաղաղութիւն և երկնային առատ ողորմութիւն Ամենա սուրբ Երրորդութեանն Հօր և Որդւոյ և Հօգոյն Սրբոյ ինչքէ՛ և հանգիցէ՛ ի վերայ համայնիցք, որովք զօրաց-

աւ և արխացեալ կացի՛ք անասուն ի փորձութեանց կենցաղոյս, յարատեալք ի բարի վարս և ի յաջողութիւնս. Ամէն:

Պանդուխտ սիրեցեալ ժողովուրդ Հայոց, մեր հայրապետական ողջոյն և օրհնութիւն տալէն յետոյ, այժմ խօսիմք քեզ հետ՝ քեզ հասկանալի լեզուով, որպէսզի չմեղագրես զքո Հայրիկ, անս՝ թէ՛ զրոց լեզուէն չեմ հասկնար. գիտեմք քո ցաւեր շատ և շատ են, և դու առաւել պէտք ունիս միջնորդութեան և քաջաբերութեան այդ օտար երկրում, այդ հեռաւոր աշխարհում. Մայր Հայաստանի գրկէն հեռացած հայրենի յարկէն զատուած, ընտանեկան քաղցր միջնորդութիւնը զրկուած, քո երջանկութիւն և միջնորդութիւն փնտռուած ես այդ օտար երկրում, և երանիք թէ պահ մը այդպէս լինէր. բայց ե՛րբ և ս՛ր տեղից ո՞վ կարող է համեմատել հայրենի աշխարհի քաղցրութիւն և երջանկութիւն՝ օտար երկրի կեանքի հետ, երբ ամեն բոլոր մարդ զգում է դառնութիւն և թշուառութիւն. ուրտեղ օտար է լեզուն, օտար է բնութիւն, օտար է աշխարհ, օտար է մարդն, օտար է դառն է օգն ու ջուրը. Աստուածային անքննելի Նախախնամութեան մի տնօրինութիւնն է. որ հայ ազգին բաժին է հանել օտարութիւն և պաշտօնութիւն. բայց միննոյն Աստուած իսպառ չէ մոռացիր երբեք մէջ պահպանիր և յաջողութիւն և հայրենի աշխարհին մէջ օրըստօրէ աճեցուցիր է և բազմացուցիր. օրհնեալ լինի նորա կամքը և տնօրինութիւնը:

Աշխարհիս բանութեան փոթորիկը ամեն կողմ տարեր, ցրուեր էր զՀայն իւր հայրենի հողէն. հեռաւոր Ամերիկան էր մնացեր ազատ այդ հասանքէն. և ահա վերջին տարիներս այդ տեղ ևս լեցուցի Հայն. և այն՝ միանգամայն և մեծ բազմութեամբ Չղլտեմ ես, Հայոց ժողովուրդք, ազատուէր Ամերիկայի ազատ կեանքն էր, առատ ու կենսաքեղն էին, իւր բազմաբնակեան և հանճարաւոր գիւտերն էին զքեզ հրապուրող, քաջող, թէ՛ քո ճակատագիր և հայրենի տան աւերն ու տառապանքն էին զքեզ այդ հեռաւոր Ովկիանոսի անհուն միջոց կարել տուող: Եթէ՛ այս և եթէ՛ այն, զնացեր, հասեր ես, և դու ինքզ զգում

ես այժմ և հակացած ես քո միճակ. բայց իմ հայրական խրատս և պատուէրս այս է առ քեզ, որ ճանաչես ինքզ քեզ: Աշխարհիս փորձութիւնները և պատահարները միշտ անպակաս են. աշխարհիս շրջանը միշտ կը հորովի. դրութիւնը երբեք միննոյն չի մնար, ինչպէս չեն մնար եղանակները. ցուրտ ձմրան կը յաջորդէ կենսաբեր գարունը, գարնան կը յաջորդէ արգիւնարբ ամառը. իսկ ամառան՝ բարեկից աշունը, յորում իւր աշխատութեան արդիւնքը կը ժողովէ մշակը և կը շտեմարանէ ի պէտս պիտոյից ձմրան: Ճշմարիտ է, Հայի կեանքը միշտ հարածական, աստանգական է եղեր. բայց Աստուած նորան իսպառ չէ թողեր երբ Հայն չէ մոռացեր զՀայաստան, չէ մոռացեր իւր Լուսաւորչական կրօնը, երբ չէ կորուսեր իւր մայրենի լեզուն, երբ ամենայն երկրագործութեամբ սրբութեամբ պահպաներ է իւր հայրենական բնաւոր աւանդութիւնները և նահապետական բարոյական յատկութիւնները: Պանդուխտութեան մէջ շատերն անհայն և բազմացան, բայց և շատերը փճացան և անյայտացան: Մէկը պահեց իւր հայրենի կրօնը և լեզուն, իւր ընտանեկան ներքին կեանքը և սրբութիւնը, իւր բնական հանճարի հետ միացուց և օտար բարոստ և գիտութիւն. աճեց, լիցցաւ և բազմացաւ: Իսկ միւսը՝ փոխեց իւր լեզուն, թողեց իւր կրօնը, կորսնցուց իւր ընտանեկան պատիւն ու սրբութիւնը, իւրացուց օտարին այն ամենը ինչ որ կործանել էր իւր համար, ինչ որ թունաւորում էր իրան, ինչ որ առաջնորդում էր զէպի կորստեան անդունդը, որով և զրորուց և անհետացու: Երանի՛ թէ անցեալի փորձը՝ ապագային խրատ լինէր. և երանի՛ որ խրատուն էլ միշտ մօտ լինէր և անդադար քարոզէր և խրատէր ինչ որ հարկն էր:

Պանդուխտ սիրեցեալ ժողովուրդք, այժմ այս է իմ պատուէրս առ քեզ, ինչ որ մեր փրկիչ կտակեց իւր աշակերտներին. ապա է պատուէր իմ, զի սիրեալիք զմիմանս, որպէս և ես ձեզ սիրեցի. այո՛, այս է իմ պատուէր, որ դուք իրար սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի. սորանով թող ճանաչեն զձեզ, որ դուք իմ դասակներս էք իմ, ո՛ր տայր ինձ զթեւս արծուոյ, զի սրացեալ առ քեզ հասանելի և կենդա-

նի բանի խօսելի և միջնարկի. բայց
ես ձեռնացած, ձեռնութեան կապանք.
նորով կաշկանդուած և բազմաթիւ
հոգեւորով ծանրաբեռնուած, մի միայն
այս թղթով կարող կը լինիմ իմ
պարտքս կատարել: Աւետարանի սի-
րոյ հետ աւանդում եմ ձեզ, սիրելի
ժողովուրդ, Փրկչի խաղաղութիւնը.
«Ձխարաղութիւն զիմ տամ ձեզ, ո՛չ
որպէս աշխարհս ապ, տամ ես ձեզ»,
զի աշխարհիս խաղաղութիւնն անկա-
յուն է. Աստուծոյ խաղաղութիւնն է
որ յաւիտենական է և մարդս կերպան-
կացնէ. խաղաղութեամբ և սիրով
պարբեցէ՛ք միմեանց հետ, որ կարող
լինիք այդ օտար երկրում, այդ բազ-
մաթիւ աշխարհում ձեր գոյութիւնը
պահպանել. ձեր պարկեշտ կեանքը և
քաղաքավարի ընթացքը թող ձեզ
պատկառելի կացուցանեն յաշս օտա-
րաց: Մի՛ և մի՛ երբէք տաք տեղի
խառնութեան և ատելութեան: Միա-
բան, միասիրտ և միակամ եղի՛ք գոր-
ծի, աշխատանաղ և կենցաղավարու-
թեան մէջ: Սիրեցէ՛ք ձեր անարատ
Մայր Ս. Կաթողիկէ եկեղեցին, որ
ծնաւ զՁեզ Ս. Աւագանու և զիեցոյց
իւր անխարդախ և մաքուր կաթով,
այն է, ուղիւ վարդապետութեամբ և
պարզ ու ուղղապետութեամբ, որ
աւանդուած էր Ս. Լուսաւորչէն և
նորա երանելի յաջորդներէն: Օտար-
ների փայլը, նոցա պերճաբոս և ա-
ղատամիտ քարոզները թո՛ղ չլացնեն
զձեզ. բա՛ւ և շա՛տ իսկ է, եթէ քո
մայր եկեղեցւոյ աղքատ հովիւը իւր
գեղջուկ քարոզով վարդապետէ և ու-
սուցանէ քեզ Ս. Աւետարանի վարդա-
պետութիւն, Մարգարէութեան,
Ընկերասիրութեան, Ազգասիրու-
թեան, Աստուածաշնորհութեան և Հայ-
րենասիրութեան հոգին: Այսքան
դարեր եկան և անցան, հողարատը
բունն փոթորկներ և հեղեղներ եկան
և զարկին, բայց քո Մայրենի Եկե-
ղեցին անդրդուելի և հաստատուն մը-
նաց իւր բարձրութեան, իւր անարատ
և մաքուր դաւանութեան և կոչման
վրայ, քանզի ի վերայ վիժի գրուած
էր իր հիմը. Եկեղեցւոյ հետ սիրե-
ցէ՛ք և հաստատուն պահեցէ՛ք ձեր
Մայրենի լեզուն, այն երկնապարզ և
լեզուն, որով խօսեցին և աղօթեցին,
երգեցին և լացին ձեր հայրերն ու
մայրեր իրենց հայրենեաց մէջ, իրենց
պանդխտութեան մէջ և իրենց եկե-
ղեցւոյ մէջ. նոյնը և սրբութեամբ ա-
ւանդեցէ՛ք ձեր որդւոց և ժառան-
գաց միշտ անմուսաց պահել զայն.
Քանզի եթէ կորուսիք ձեր լեզուն,
կորսնցուցած էք և ձեր ամեն ինչ:
Հաստատուն մնացէ՛ք ձեր հայրենի
աւանդութեանց, պահեցէ՛ք ձեզ մա-
քուր և անարատ ձեր ամեն կենցաղա-
վարութեանց մէջ, ի բաց կացէ՛ք այն
ամեն ժողովուրդներէն, որ մարդուս
դէպի կորուստ են առաջնորդում, օր-
րեցէ՛ք սուրբ ամուսնութիւն և ընտա-
նեկան մաքուր բարոյական կեանքը.
Թող նոր աշխարհի կեանքը իր ամեն
չքեղութիւններով և փայլերով զձեզ
չհրապուրէ. յիշեցէ՛ք, որ դուք պան-
դուխտ էք այդ օտար երկրում. յիշե-
ցէ՛ք որ մի օր իւրայիշի նման Տէր

Աստուած զձեզ ևս պիտի հանէ այդ
պանդխտութեան աշխարհէն՝ դէպի
ձեր հայրենի երկիրը. յիշեցէ՛ք որ
օտարը միշտ օտար է: Զանացէ՛ք, որ
դուք իրարմով ապրիք, միմեանց օգ-
նէք, թշուառ եղբօր, անկեալ ընկե-
րոջ միջնարկութեան ձեռք կարկս
ուէք. գործ չունեցողին, նորեկին,
հիւանդին օգնութիւն և աշխատանք
գտնէք, որբեր և թշուառներ խնա-
մէք, նոցա հաց և ուսում տաք, նո-
ցա աշխատանքի վարձեցնէք և ամեն
ձեր գործերում ցոյց տաք, որ ճշմա-
րիտ ձեր հայրերի հարազատ որդիներ
էք:
Այսքանս բաւ համարելով, օրհնի
ժողովուրդ, կը վերջացնեմ իմ խը-
րատական կոնդակս, որհնելով զձեզ
ամենքդ. կաթովեմ որ վերանան
ձեր մէջէն բոլոր կազ, կռիւն կուսակ-
ցութիւններ, թաքաւորէ ձեր մէջ
խաղաղութեան և հեզութեան հոգին.
Թող յաջող լինին ձեր գործերն ու աշ-
խատանքը, զերծ լինիք ամեն վտանգ-
ներէն և փորձութիւններէն. հաստա-
տուն և անդրդուելի մնաք ձեր հարա-
զատ Մօր Ս. Կաթողիկէ եկեղեցւոյն.
Թող բա՛ւ համարէ Տէր Աստուած մեր
հայրենի աշխարհի այս բոլոր պատա-
հարներ և փորձութիւններ, որոնք
խապաւ քամեցին խեղճ ժողովուրդի
չունչն ու հոգին:
Ես ևս չեմ ժողովար վրեժ. քո
բազմապիսի պահանջը, եկեղեցւոյ կա-
րիքը, իմ գաւակացսննն ու շահը ինձ
վրայ քաղցր պարտականութիւն դրին
կատարել քո վաղաքուայ ցանկութիւ-
նը. այն է, զրկել քեզ բարձրաստի-
ճան և կարող հովիւ. ահաւասիկ Հայ-
րիկը այդ նախապատուութիւնը, այդ
ծանր լուծը, այդ մըրկածուի նաւի
զեկը նորէն յանձնեց փորձուած և
վաստակաւոր նաւագետին, այն է,
Սարգեան Գերայատիւ Տ. Յովսէփ
Սրբազան Եպիսկոպոսին, որ առաջին
վաստակողն և հովիւն եզաւ քեզ հա-
մար այդ ստար երկրում, որ ամեն ար-
գելքներն և նեղութեանց տոկալով կա-
րողացաւ Լուսաւորչի հաւատոյ հիմ-
քը, Հայի խաչը այդ օտար երկրում
հաստատել և բարձրացնել, կանգնել
Հայ եկեղեցին: Եւ ես միայն նորան
յարմար և արժանաւոր սեսայ Ամե-
րիկայի համար Հովիւ նշանակելու, օ-
րոյ համար իսկ սուի նորան եպիսկո-
պոսական բարձր աստիճանն և սրբա-
զան կոչումը, յանուն Ամերիկայի Հայ
ժողովուրդին: Ապա ուրեմն և դու,
տարագիր Հայ ժողովուրդ Ամերիկայի,
լի՛ր քո քաջ հովուի ձայնը, հետեի՛ր
նորա առաջնորդող քայլերին, կատա-
րի՛ր նորա բարի կամքը և պահի՛ր
խրատը. և յայնժամ դու կը տեսնես,
որ արգարե ամեն ինչ բարի է քեզ
համար, ամեն ինչ յաջող է, և դու
երբէք չես խտորիր արդարութեան,
ճշմարտութեան և երջանկութեան ճա-
նապարհէն: Մենք նկատելով նորա
փորձառութիւնը, նորա գործունէ-
ութիւնը և նորա սէրը դէպի իրան հա-
ւատացեալ ժողովուրդը, տունք
նորան լիպօր իշխանութիւն իւր ա-
ռաջնորդական պաշտօնավարութեան
մէջ, քաջ գիտնալով՝ որ նա կարգա-

րացնէ մեր յոյսը և վստահութիւնը,
գործելով միշտ ի պայծառութիւն և
ի բարեկարգութիւն և ի միջնարու-
թիւն և յառաջդիմութիւն Ձեզ, սիրե-
լի որդւոց. ապա և դուք ամեն դէպ-
քում աշակից եղի՛ք ձեր նոր առաջ-
նորդին, մանաւանդ Ձեր Ս. Փրկչի Ե-
կեղեցւոյ պարտուց վճարման մասին.
Թէպէտե մենք ինկատի ունենալով
Ձեր վիճակը, այդ պարտքերի մի մա-
սի համար ուրիշ ազգայնոց դիմեցինք,
սակայն զխաւոր բաժին Ձեզ կը մնայ
հաստացանել, գուր էք նորա կառուց-
ման և շինութեան նպաստողներ. ա-
պա Ձեզ կը մնայ նորա մնացած պար-
տուց համար ևս հոգալ. այս հանգա-
նակութեան համար մենք տունք Գեր-
Տ. Յովսէփ Ս. Եպիսկոպոսին ժապա-
ւիտեալ մատեն, կնքուած մեր ան-
սանական կնքով. նորա մէջ կարող
էք ստորագրել:
Ընդունեցէ՛ք ձերունի Հայրիկի ու-
րայիւր և սրտագին ողջոյն և օրհնու-
թիւն, զոր ծրարելով սոյն կոնդակի
մէջ կուզարկեմ Ձեզ Մայր Հայաստա-
նէն, աւելարդ Մասիսէն, Լուսաւորչի
աղօթոյ և հանդստեան Արագած սա-
րէն, Երասխէն, Ս. Էջմիածնէն, իւր-
րև կենսատու ցող երկնային քո պա-
քեալ և կարօտաւոր սրտիդ:
Ողջ լիւր՝ ք և օրհնեալ, յաջող և
միջնարեալ այժմ՝ և միշտ և յաւիտ-
եանս. ամէն:
ՂԵՆ Յուլիսի 1898 ամի և ըստ Տօ-
մարիս ՌԵՄԻՆԻ. ի հայրապետութեան
մերում Երգ ամի՝ յԱրարտեան
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ի Վաղար-
շապատ Թիւ 812
(Ստորագրութիւն)
ՄԿՐՏԻՉ ԿԱՓՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ԱՄՍՆԵԱՆ ՎԻՂԷՒՄ ԿԱՅՐԸ
ԵՒ Կ.ՊՈԼՍԻ ՉԱՅ ԵՒ ՅՈՅՆ
ՊԱՏՐԱՐԱՐՆԵՐԸ

«Սեմաֆոր»ի Կ. պօլսի քղապետը
գրած է Առուսեայը.

Վիճելով կայսրի Կ. պօլսի բնակու-
թեան նախնական ծրագրին մէջ այս
ալ կար որ կայսրն իր ներկայութեան
պիտի ընդունէր պատրիարքներն և
ուշմահմետական հասարակութիւնների
հոգևոր պետերն ալ: Այդ ընդունե-
լութիւն չեզաւ, հաւանորէն Յոյների
տեղեկերական պատրիարքի մերժելու-
վը: Երկնա Յունաստանի գետնային
Տ. Մարտիոսաթո, հեղինակութիւն-
քական դաշնակցութեան կուսակցիցե-
րէ մին, խորհուրդ կուսար պատրի-
արքին որ անպատճառ ինք ալ եր-
թայ կայսրին այցելութիւն մը ապա
Մեծ եկեղեցիին անոր համար բարե-
մաղթութիւնները ներկայացունէ,
միւս կողմէ ալ ուսակական գետնային Տ.
Ջինովիէզ կիմացունէր կոստանդին
Ե.ին թէ իր կառավարութիւն լաւ
ուշքով չպիտի նայի Արևելեան եկեղե-
ցիի ծայրագոյն պետին երթալ Ալմա-
նիսի կայսրի յարդ. նքներ մատուցա-
նելուն վրայ: Ս. Սինոդը ուշագրու-
թեան առեւելով խնդրը, որոշեց թէ
նորին Սրբութիւն չկրնար առաջ ինք
այցելութեան երթալ Վիճելով կայս-

րին. ո՛ր կը մնայ օր կայսրն անձամբ
չպիտի փոխադարձէ այդ այցելու-
թիւն, հապա իր շքախումբէ մէ-
կը իր կողմէ պատրիարքարան պիտի
զրկէ:
Հայերի պատրիարքն երբ իմացաւ
Տէնէրի պատրիարքարանի որոշումը,
ինք ալ որոշեց միևնպէս կերպով վար-
ուիլ — թէ և ինք կրօնական միևնոյն
հանգամանքների մէջ չչափուի որով-
հետե ինք Գրիգորեան եկեղեցիի ծայ-
րագոյն պատրիարքը չէ — Այս ալ
ուրեմն մի պատրանք եղաւ կայսրին
համար որ Արևելքի բոլոր քրիստոն-
եայների պաշտպանի դերն ունենալ
կերպէր:
ՐԱՅՅԻՆ ԳԵՐԵՉՄԱՆԻՆ ԱՌԱՋ
(Մահուան տասնամեակի ևս արձակ)
Տաս տարի անցաւ, տաս տարի այն
օրուանից երբ սև հոգին յանձնեցինք
Հայոց մեծ վիպասանին:
Մեաւ Բաֆֆին, նորա բեղմա-
ւոր դրիչը գաղաբնց շարժելուց, լը-
ուեց նա յաւիտեանս. բայց չի՛ լուել
իւր ձայնը, չի՛ լուել իւր միաքը. Բաֆ-
ֆին միտ կենդանի է հայ հասարա-
կութեան սրտի ու մաքի մէջ, Բաֆ-
ֆին միշտ խօսում է մեզ հետ, ոգևո-
րում, յուզում և առաջնորդում:
Բաֆֆին միշտ մեր մէջն է, Բաֆֆին
ամեն սէկը՝ ի՛նչ սրտի բերկարանքով,
ի՛նչ բուն ոգևորութեամբ, ի՛նչ զե-
ղուն զգացումներով ձեռք չէ առել
«Սամուէլ»ն ու «Գաւիթ» Աեկը, «Կայ-
ծերն» ու «Իսկիթ»ը և ի՛նչ բոց ու
կրակով չէ լափել ծայրէ ի-ծայր. քա-
նի՛ հասարակներ չէ՛ լուել նա մեր
սրտի խորքերից, քանի՛ կաթիլ ար-
ցունքներով չենք ողջուլ այդ մար-
գարտաչար երեսներ և քանի՛ անըզ-
գայ սրտերում զգացման հուր չէ վա-
ռել նա:
Դեա գարոցական գրասեղանի վը-
րայ, շատ մանուկ հասակում, մեր
ձեռք տրուեց Բաֆֆին. սակայն ամ-
բող տասնեակ տարիներ, Բաֆֆին
միշտ մեր գրասեղանի ամենամեծակա-
զին գարգն է կազմել և պիտի կազմէ
քանի կայ հայութիւնը:
Առաջին անգամ գտնուելով Թիֆ-
լիզում, սրտի ի՛նչ անհուն ոգևորու-
թեամբ էր որ քայլերս ուղղեցի դէ-
պի Խօջափառքի գերեզմանոցը՝ ան-
մահ վիպասանի շիրմին առաջ ուխտս
կատարելու: Ի՛նչ չքեղ դամբարան-
ներ, փայլուն մահարձաններ սեսա
չկային այնտեղ. յաւիտենական քնով
ննջողներն իրենց դիակներն վրայ
կանգնած յիշատակարաններ ունէին:
Բայց ո՛ր էր հայ երիտասարդութեան
պաշտեցեալի շիրմն: Գերեզմանոցի
հեռաւոր անկիւնում, դէպի վեր, հա-
մե՛սա, շա՛տ համաստ մի հողակոյտ՝
ծաղկանոցի մի ամուրի մէջ: Տխուր և
մառալ էր ասպարուսութիւնս. ծառեցի
և համբուրեցի այդ սուրբ հողը... Ի՛նչ
դառն յուզումներով չը լցուեց իմ սիր-
տը: Հասարակութեան անխոնջ մշա-
կը մահարձան չունէր:
Հրացրի՛ց այդ պակասը մեր հա-
սարակութիւն: Այո՛, լրացրեց, անց-
եալ օր մարմարեայ մի պարզ սիւն

կանգնե-
մահուան
սիրտը
կամ լը-
Բաֆֆին
ցումը
Աղբի
վարձը
Այդ
«Սի-
Բաֆֆին
ասպար-
այդ, ո-
նեւով
հանգու-
Այո՛, կ-
եայ ա-
ձանը
վրայ
նով մե-
չացրաւ
մուէլը
բողք
Բաֆ-
զիկ յո-
կարող
Սակա-
սարակ-
բարձր
նրանց
դարգս-
Բաֆ-
երկեր
սուրբ
հրատա-
Ո՛չ դո-
ուակա-
է անհ-
է վեր-
ի լոյս
Միայն
կուրծի
Դարձ-
նայ
Բաֆֆին
սարակ-
այդ ե-
ն մի-
զարմա-
համբ-
այդ դ-
անց
կութե-
դէմ
մեծա-
ուել,
յոյս ո-
կե այն-
որ սկ-
նը չպի-
Անմ-
գոյն ո-
րակու-
հարձա-
րակու-
Բաֆֆին
Տաս
անմահ
խոնալ

Յրանսա կը խորհի քաշուիլ Յաշու
տան, Պահր էլ կազալի կողմէն փո-
խարիւթիւններ ստանալով:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վճռալին լատանը որին ներկա-
յացուած էր Տրէյֆիւսի դատի վերա-
քննութեան խնդիրը Պրիստնի ինկած
նախարարութեան դատական նախա-
քարէն, անցած շաբաթ օրի (հոկտ.
29) նստին մէջ մի որոշում տուաւ որով
ո՛չ կը ջնջէ տրուած վճիռը և ո՛չ վերա-
քննութեան կենթարկէ դատավարու-
թիւնը, այլ յաւելուածական հարցա-
քննութեան մը կատարուիլը կը հրու-
մայէ, մինտոն ժամանակ մերժելով այս
միջոցին Տրէյֆիւսի պատժի դադար-
ման համար եղած խնդիրքը:

— Տ. Եարլը Տրէյֆիւսի յաջողեցաւ
արմատական և չափաւոր հանրագե-
տականներին միջև ներդաշնակութիւն
մը գոյացունելով, երկու կուսակցու-
թիւններէն ալ կազմել իր նոր նա-
խարարութիւն: Տ. Տէլքասէ կը մնայ
արտաքին գործերի նախարարու-
թեան մէջ, Տ. արը Տրէյֆիւսէ պատե-
րազմական նախարար կը լինի, Տ.
Լոքըրու ծովային և Տ. Բէյթրալ եւ-
կատական նախարարութեան մէջ կը
մնան: Տ. ԼըՊրէ գտտական նախա-
րար կը լինի և Տ. Եարլը Տրէյֆիւսի
նախարարապետութեան ղեկ իրեն
վրայ կաննէ ներքին գործերի նախա-
րարութիւնը:

ԱՐՅԱՅԱԼՄԱՆ ԼՈՒՐԵՐ

Թանճէրէն կիմացունեն թէ մի
քանի անգլիական պատկերի ապօրի-
նաւոր կերպով բանտարկութեան հա-
մար անգլիական և մարտքեան կառա-
վարութիւններին միջև ծագած վէճը՝
որի համար վերջնադիր զրկած էր
անգլիական կառավարութիւնը Մա-
րոքի սուլթանին, խաղաղութեամբ
վերջացաւ: Հոկտ. 26ին, Մարոքի
կառավարութիւնը վճարեց անգլիա-
հպատակներին բանտարկութեան հա-
մար պահանջուած տուգանքը:

— Ըրբ կայ թէ Ամերիկայի Միաց-
եալ Նահանգներին կառավարութիւնը
կը պահանջէ Ուպսոնիան որ փրկու-
պեան կղզիների արշիպելագոսը բո-
լորովին իրեն տրուի: Այս լուր բնա-
կանապէս սատակ յուզում պատճա-
ռած է սպանիական կառավարութեան:

ՄԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ

Իոյս տեսաւ
ՐԱՅՅԻԻ
ՍԱՄՈՒԷԼ
պատմական վեպը
Ա. Բ. Գ. Գիրք
Հեղինակի վերջին պատկերով
Գինն է 7 շիլինգ

Իսկ «Գալիթ-Ֆէկ» հատոր Ա, Բ և
Գ վերջաբանով և «Կայծեր» հատոր
Բ. յախարար, լոյս պիտի տեսնեն

ներկայ տարուայ ընթացքում, որոնց
բաժանարարութիւնը շարունակ-
ւում է. երկու գրքի միասին բաժա-
նարարին է՝ 10 շիլինգ. իսկ լոյս
տեսնելուց յետոյ կարծեման 14 շիլինգ:

Ցանկացողները թէ՛ Սաւոնէի և
թէ՛ Բաֆֆիի միւս երկերի համար,
կարող են գիտել այս հասցէին
Mme Raffi

270, Uxbridge Road.
Shepherd's Bush,
London W.

ՄԱՆՈՒ ԳԻՐՔՆԵՐ

Արևելահայ խմբագրատան մէջ
ծախու կը դառնուին հետեւեալ գիր-
քերը որոնց սուղև նշանակուած գի-
նքերին մէջ հաշուուած է նաև զրկե-
լու փոստի ծախքը:

Ծրարները ապահովագրուած
(recommande-registree) ստանալ ու-
ղղիները պէտք է որ ամեն մէկ ծրա-
րի (մինչև 2 քիւ) համար 25 սանթիմ
ապահովագրութեան ծախքը վճարեն:

ԻՆՏԵՆՍԻՏԻՏԻՆ ԱՆԳԼԻՆԵՐԷՆ ԼԵՁՈՒԻ
Թորիկեց

ՊԵՏՐՈՍ Ե. ԲԱՐՏՈՍԵԱՆ

Այս գիրքը պատրաստուած է յատ-
կապէս Ամերիկայի Միացեալ Նահան-
գաց մէջ գտնուող Հայերուն Ամերիկ-
եան Անգլիկներէն լեզուն ամենապիտիւն
ոճով սովորեցնելու համար: Ինքնու-
տաջիւր յօդուած է գերմանական
և ամերիկեան մանկավարժական սկզբ-
բունքներուն վրայ հիմնուելով, և
յարմարցուած է մարդակազմութեան
ու իմացական փրկիսովայութեան նո-
րագոյն պահանջներուն և Ամերիկայի
Հայոց իմացական կարողութիւննե-
րուն ու տեղական պահանջներուն:
Առաջինն է իր անսակին մէջ:

Կը բաղկանայ աւելի քան 350 ե-
րաներէ և կը պարունակէ աւելի քան
3,000 ամենէն շատ գործածուած բա-
ռեր: Ամեն բառի առջև գրուած է
նոյն բառի ամերիկեան մարտնը ան-
գլիկերէն հնչումը և ամերիկեան նշա-
նակութիւնը: Գիտական բառերու
առջև աւելցուած են քերականական,
պատմական, աշխարհագրական, աստ-
ղագիտական, չափաբերական և ըն-
կերարանական զանազան ծանօթու-
թիւններ: Գինն է 40 ֆրանգ (2 տո-
լար) Մարտէյլի մէջ: Մարտէյլէն
դուրս զրկուելու համար 40 ֆր. և 80
սնթիմ:

ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ.

(Յատկապէս պատրաստուած Ամերի-
կայի Միացեալ Նահանգաց Հայ գաղ-
թականներուն կեանքի, ժամանակի և
գրամի խնայողութիւն ընել տալու
հարկ եղած դիւրութիւններն ընծա-
յելու համար) Աշխատասիրեաց
Պետրոս Ռ. Թորոսեան. Տպագր-
նիւ Երբք, Լիլիոս Խալա և ընկ. 1897:
Ամերիկա գնացող Հայերին և կամ
արդէն հին գտնուողներին համար շատ
կարեւոր գիրք է: Գինն է 1 ֆրանգ
և 25 սանթիմ:

Արտուր Հայաստանի կամ Տե-
ղեկագիր Բարուայ, Վարդերգու,
Չարսանճագ, Ճապողուրի և Եր-
զնկայու: Յաւելուած ըստ խնդրա-
նաց աղագարաց «Խիզան պատու»:
Աշխատասիրեաց Պոլոս Ծ. Վ. Նա-
րսևեան: 2 ֆրանգ:

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐՈՒ

(Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՅՈՑ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՒԵՆՈՒՄԻ
ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՂԸԱՐԻՑ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը
ներկայացունէ ընտանեկան տխուր
պատկերներէ մին ուր կը տեսնուի թե՛
անբարոյական մի հայր իւր տղայան
ուած վարքուբարքով որչա՛փ չարիք-
ների պատճառաբարձած է և վերջ ի
վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքը
սպաննուած և անհետացած է աշ-
խարհէ: Գին 1 ֆրանգ, (75 սանթիմ):

ՃԲ
ՀՐԱՅԱՐԱՊՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆԻ
ԳՐԱՄ ՈՑԱՆԱԻՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրե-
նասիրական տասնուորներէ մի քանի
ամփոփուած են այս տետրակի մէջ իր-
բեւ նոյններ զանազան քաղաքներէ
մէջ և զանազան տպագրութիւններէ
տակ իւր երբեմն գրած տասնուորներէ
որոնք ժամանակին հրատարակուած չի-
լինելով կորսուած են այժմ: Այն մի
քանի տասնուորներ որոնք իբրև նոյն
ամփոփուած են այս տետրակի մէջ,
ցեր և ցան կը գտնուին Կ. Պոլսու քա-
ղաքուած աղագային երգարաններէ
մէջ՝ որոց վերստին տպագրութիւն
վաղուց արդէն արդիւնուած է, և Ասիա
և Արևելիայ լրագիրներին մէջ, Նմալքեալ
մէջ փոքրիկ տեղեկութիւններ տքը-
ւած են նաեւ թէ այդ տասնուորներէ
ի՛նչ տպագրութիւնների տակ ներշն-
չուելով գրուած են: Գին (10 սանթիմ)
45 սանթիմ:

**ՄԻ ՊՈՒԼԿԱՐ ՀԱՅՐԵՆԱՍԷՐ
(ՀԱՔԱՐԻԱ ՍԹՈՅԱՆՈՎ)**

ՅՐԱՆՍԵՐԷՆԷ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ՊԻՏԻՆԵ ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ
1894

Պուլկարի անկախութեան հե-
րոններէ մէկին, Չաքարիա Սթոյա-
նովի, որ իր ընդունակութեան շնոր-
հով յաջողեցաւ մի լեռնաբնակ զիւ-
ղացի հովուի պարզ վիճակէն հետզ-
հետէ արհեստաւոր, վարժապետ, յե-
զափոխական գործիչ, խմբագրապետ
և վերջապէս ազատ Պուլկարի Աղ-
գային ժողովի նախագահ դառնալ,
խիտ հետաքրքրաշարժ կենսագրու-
թիւնն է, ուր ուշադրութեան արժանի
տեղեկութիւններ կան նաեւ Պուլկա-
րիան թիւրքի լուծէն ազատելու աշ-

խատող պուլկար հայրենասէր յեղա-
փոխականների գործունէութեանը մա-
սին: Սկիզբը դրուած է նաև հեղի-
նակին, Բրոֆէտօր Լուի Լըժէի, և
թարգմանչէն միջև եղած թղթակե-
ցութիւնը այս գրքի հայերէն թարգ-
մանութեանն առթով:

Հիղինակը շատ իրաւամբ կը գրէ
իր յատկաբանի վերջ թէ «Չար-
մանք պիտի պատճառէ ինձ եթէ ըն-
թերցողները հետաքրքրութիւնը
չարժի պետական մարդ դարձած մի
զիւղացի այս վաւերական պատմու-
թեան վրայ»:

Գինն է փոստի ծախքով մէկտեղ
1 ֆրանգ և 40 սանթիմ:

Տարածելու համար մեծ քանակու-
թեամբ անուղներին 25 % զեղչ կը
լինի:
(Պարզաստանի Հայերին համար
1 ֆրանգ է):

**ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ
ՀԱՐԻԻՐԱՍՏԵԱՅ (1794-1894)
ՅՈՒՅԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ**

Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւո-
րութեան դարադարձին առթով 1894
թուականին հրատարակուած այս միւս-
ծալ դիւրքով և լուսատիպ (phototypi-
que) շքեղ պատկերի միջոցով ինն է
50x35 հարիւրորդամէթր և սպուած
է 70x45 հարիւրորդամէթր քարտու-
նի (carton) վրայ այլ և այլ բնագրով
Մէլտեղը գրուած է հայ լրագրու-
թեան հիմնադրին, Տ. Յարութիւն
Քհնյ. Շմաւոնեանի, պատկերը և բո-
լորովին 1894ին հայերէն լեզուով
հրատարակուող բոլոր լրագիրները,
անոնց գրէթէ ամենքի խմբագրապետ-
ների պատկերներով:

Գինն է 4 ֆրանք, ճանապարհա-
ծախքը մէկտեղ հաշուած. իսկ Պարս-
կաստանի համար 2 ֆրանք և 50
սանթիմ:

Գաղիւքիւրտեան Հ. Գ. — Պատմու-
թիւն Հայ լրագրութեան ի սկզբանէ
մինչև մեր ժամանակը. Հատոր Ա.
1794-1860, Մէկ լուսատիպ պատկե-
րով: Գինն է, ճանապարհածախքով
մէկտեղ, 2 ֆր. և 50 սնթիմ:

Վերջերս թէ՛ պատկերը և թէ՛
գիրքը կարելի է ստանալ Արևելահայ
խմբագրատունէն, արժէքը կանխիկ
զրկելով:

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍՐՐԱՋԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Տաճկական բնութեան նահատակ
եղող Խորէն Նարայէյ-Լուսինեան Սըր-
բապանի պատկերը ընտիր թղթի վե-
րայ տպուած կը ծախուի Արևելահայ
խմբագրատունը: Գինն է 65 սան-
թիմ, փոստի ծախքը խմբագրատու-
նէն վճարուելով:

**ՅԵՐԵՆ-ԻՄԱԿԻՐ
Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ**

ՄԱՐՏԵՍԻ
Հայերէն տպագրւած Մ. Փորթուգալեանի
Le Grand: François CARRIERE
Marseille. — Imprimerie et Papeterie du
Quai du Canal, 9